Մրցույթ՝ «Երևանի հ. 178 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «դասվարներ» (16 դասաժամ, 15 դասաժամ) ,«ֆիզկուլտուրա» (11 դասաժամ), «երաժշտություն» (8 դասաժամ), «ինֆորմատիկա» (4 դասաժամ), «մայրենի»(7 դասաժամ) , «թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» (3 դասաժամ), «պատմություն» (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով ՝թեստավորմամբ և հարցազրույցով: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում /Ձև 1/՝ , մեկ լուսանկար 3×4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/
5. Ինքնակենսագրություն /Ձև 5/,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր ՝ժամը 10:00-ից 14:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 15-ին ՝ ժամը 14:00- ին, Երևանի հ. 178 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք.Երևան,Խաղաղ Դոնի 25:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /010/ 47-02-00 հեռախոսահամարով: